

Գ. Գ. ԱՆՈՒՆՅԱՆ

## ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Հայ բազմադարյան գրականության միջնադարի ու նոր ժամանակների սահմանադրյալ, իրեն այդ սահմանադրյալներն իրար շարկապող ամբակուռ մի օղակ, վեր է բարձրանում հանճարեղ աշուղ-բանաստեղծ Սայաթ-նովայի հոյակապ ստեղծագործությունը: Մեծ է կովկասյան ժողովուրդների հետաքրքրությունն այդ ստեղծագործության ու նրա անմահ հեղինակի նկատմամբ: Այդ անհատնում հետաքրքրության արդյունքն են նաև արվեստի այն բազմաթիվ գործերը, որոնք դարից ավելի ժամանակամիջոցի ընթացքում ստեղծվել են համեմատելի Երզնի վերաբերյալ: Սայաթ-նովայի գեղարվեստական կերպարը կերտվել է գրականության ու երաժշտության մեջ, բնի ու էկրանի վրա: Լեզիկներով ու ավանդություններով զարդարված, խորհրդավորություններով ու ողբերգություններով լեցուն նրա կյանքի առանձին դրվագներ նյութ են հանդիսացել վեպի ու պատմվածքի, պոեմի ու բալլադի, բանաստեղծության ու Երզնի, կինոնկարի ու դրամայի, օպերայի ու օպերետի, ֆանդակի ու նկարի համար:

Հարյուրից ավելի են չափածո այն գործերը, որոնց մեջ պատկերավորման զանազան միջոցներով, ավելի շատ, իհարկե, աշուղական պոեզիայի հնարաններով, կերտվել է Երզնի արքայի լիրիկական կերպարը: Բանաստեղծներից ճմանց ոգևորել է Սայաթ-նովայի բյուրեղյա սերը, ծիրիները բողոքի ու ընդվզումի մոտիվն են ընդգծել, Երրորդներին հուզել է եղբայրության ու բարեկամության Երզնի, հաջորդների սրտովն է Երզնի անկաշառ սիրով խալխին նոհարություն անելը: Շատերը մեծ գուսանի դժբախտ սիրո ուժով իրենց հույզված են արտահայտել, Էամ, պարզապես, բանաստեղծական ձևի մեջ իրենց հիացումը մարմնավորել՝ միշտ բանաստեղծի ապրած, էպոխայի ընդհանուր ֆոնի վրա: Նվ աշապես՝ խոսքի վարպետից մինչև սկսնակը, վառարանված գուսանից մինչև առաջին ֆայլերն անողը:

Սայաթ-նովան կովկասյան և ընդհանրապես ժողովուրդների բարեկամության սիմվոլ է: Նրա անունը, այդ իսկ պատճառով, անբաժան է հատկապես բարեկամության բեմաներով զբաղվող Երզնի: Նվ բնավ պատահական չէ, որ «Եղբայրություն» բանաստեղծության մեջ աղբյուրանցի սյունք Ջ. Նովրուզովը գրում է.

Նվ մի՛րե անմահ Սայաթ-նովան էլ  
Մեր սրտերը իր Երզնի շի գամում,

Իսկ Մ. Ռահիմը («Երգ եղբայրության») հռչակում՝

Մենք նույն սազն ենք նվագել,  
Նույն Երզնի ենք ասել մենք,  
Ինձ էլ հուզել, բովել է  
Սայաթ-նովի Երզնի ամեն...<sup>2</sup>

Նույն հողակտորի վրա, նույն Երզնի տակ միևնույն ցավերով ու վշտերով, ուրախություններով ու հաջողություններով ապրող ժողովուրդների նկատմամբ հայ հանհարեղ բանաստեղծի մեծ ու անկաշառ սիրո ընդհանրացումն է վրաց ժողովրդական բանաստեղծ, Սայաթ-նովայի վրացերեն Երզնի առաջին հրատարակիչ Ի. Գրիշաշվիլու՝ դարձյալ բարեկամության բեմայով զբաղված «Իմ Թրիլիսի, Բաֆու, Նրեան...» բանաստեղծության հետևյալ ֆառատողը.

1 «Գրական Աղբյուրներ», Բաբու, 1960, № 6, էջ 19:

2 Նույն առիթում, էջ 52:

Մեզ հետ է կանգնել Բյամանշով բոցե  
 եվ Սայաթ-Նովան, հաննարը երգի,  
 երեւ սրով է նա շարին խոցել,  
 Ձարկել լարերին քափով եռակի...<sup>3</sup>

Փայաթ-Նովայի պայծառ կերպարը սերունդներին դաստիարակում է ժողովուրդների բարեկամության վսեմ ոգով.

երեւ լեզվով է Սայաթը երգել,  
 երեւ ձայնով է նա սրտս հուզում,  
 երեւ ձայներն այս սրտիս մեջ պահել,  
 Տասնվեց ձայնով երգել եմ ուզում<sup>4</sup>,  
 (Ս. Զիֆովանի, «ես զավակը չեմ Սայաթ-Նովայի»)

«Հերակլ քաղաքների արչականների ժամանակ Սայաթ-Նովան առաջնորդում էր ժառանգների ուղեգրերը և իր սագով ողբերգություն հայրենիքի փառքի պաշտպաններին», — վրաց լեզուագրի այս վկայությունն է ընկած ի. Բրիչաշվիլու մի այլ «Սայաթ-Նովայի սագով» բանաստեղծության հիմքում: Նրանում պոետը խոշոր ընդհանրացման է հասել. ժողովրդի երգիչ էր Սայաթ-Նովան, մարտիկ ու բանաստեղծ, և հետևորդները ժառանգել են նրանից այդ հիանալի հատկանիշները.

Այդպես էր այն հին ժամանակ,  
 եվ այդպես է կրկին:  
 Հետևում եմ ես շարունակ  
 Սուրբ հենց այդ երգին<sup>5</sup>:

Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ մարտիկ բանաստեղծ են կոչում անսահման լիրիզմով հագեցած երգերի հեղինակին: Պետք է խոստովանել, սակայն, որ վրաց պոետները միանգամայն ճիշտ են բացահայտել Սայաթ-Նովայի ստեղծագործության պատմական նշանակությունն ու դերը: Աշուղների աշուղի երգերը ոչ միայն արցունքներ են փռում ու զմայլանք պատհանում հոգիներին, այլև պայքարի են կոչել ընդդեմ վատի, տգեղի, չարի...

Վրաց բանաստեղծներն իրենց ստեղծագործություններում փառաբանում են Սայաթ-Նովայի անսահման մեծությունը, բացահայտում նրա երգերի անհատական հմայքը, հիանում նրա անմահությամբ: Ս. Զիֆովանիի համար Սայաթ-Նովան այն մեծ արվեստագետն է, որի սագով նա վստահորեն կարող է մրցել «երգիչների հետ հին ու մեծանուն»: Նույն միտքն է ընդգծում նաև Գ. Անանյանը, որի համար հայ հաննարեղ աշուղը իր երգերով անմահություն վաստակած պոետի տիպար է. ու ինքն էլ ձգտում է նմանվել դարերին «զարնանախոս Բյամանշայի խոսկան լարը» բողբոջ երգչին («նրեւ երգը հույս լինի մեզ...»)<sup>6</sup>:

Ս. Զիֆովանու «ես զավակը չեմ Սայաթ-Նովայի» հիանալի բանաստեղծությունը միաժամանակ կովկասյան ժողովուրդների մշակույթի վրա մեծ երգչի բողբոջ հսկայական ազդեցության ընդհանրացումն է.

Սայաթի ձայնը հման է սրի,  
 Քափանցել է նա իմ երգերի մեջ,  
 Իբրև հուրդաստ ալիքի Քոնի,  
 Կամ Կրծանիսի արեգակն անշեշ:

Այդ տեսական ազդեցության լավագույն օրինակներից է նաև Գր. Օրբելիանու՝ ղեռնա 1833 թ. գրած «Նմանողություն Սայաթ-Նովային»<sup>7</sup> բանաստեղծությունը, որ չափածո առաջին գործն է, որտեղ փորձ է արվում ուրույն ձևով վերարտադրելու երգչի կերպարը: Քեւ բանաստեղծը հանդես է գալիս իր անունից, բայց այդ անուն էլ այնպես, ինչպես կանեւ Սայաթ-Նովան: Օրբելիանու համար մեծ բանաստեղծը սիրո, հառաչանքի, նակատագրի կողմից հալածված երգիչ է:

Իր ինքնատիպ արվեստով, մարդու մեջ լսվելու ու զեղեցիկը սերմանելու ձգտումով Սայաթ-

<sup>3</sup> Նույն տեղում, 1961, № 1, էջ 5:

<sup>4</sup> «Վրաց գրականության ընտիր էջեր», Սրբան, 1961, էջ 505:

<sup>5</sup> Ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, Սրբան, 1950, էջ 79:

<sup>6</sup> Վրաց գրականության ընտիր էջեր, Սրբան, 1961, էջ 505:

<sup>7</sup> Ի. Օրբելիանու, Стихотворения, Тбилиси, 1947, стр. 44.

Նոգան այսօր էլ, ինչպես Ս. Ջիֆոլանին է գրել, շարունակում է իր քարերաւ ներգործությունն ունենալ:

Եվ մեծ Սայաթի Լեզերի ուժով  
Հիմա իմ պայծառ քնարն եմ լարում:

Սայաթ-Նովայի մասին մեծագույն հիացմունքով և նրա ինքնատիպության նիշտ ընկալումով գրված իր հոդվածներն իր քաղաքի նրան բանաստեղծություն է նվիրել նաև ռուս բանաստեղծ Յա. Պոլոնսկին<sup>8</sup>, Հայ ժողովրդի մեծ բարեկամ Վ. Բրյուսովը Վրաստանը չի պատկերացնում առանց Սայաթ-Նովայի: «Թիֆլիսում»<sup>9</sup> բանաստեղծության մեջ Թամարա քաղաինու «մեծապանծ» դստի Էտո միասին նա հիշում է «և դարձ պայծառ Սայաթ-Նովայի»՝ Վրաստանի մի ամբողջ դարաշրջանի ամենաբնորոշ երևույթը համարելով հայ բանաստեղծին: Դոնի ափերից մեր Լեզ-չին Լորայրական սղոյուն է բերում ուկրաինացի պոետ Լ. Դմիտրևիկոն<sup>10</sup>: Վ. Ինրերը հայ աշուղ-ների անմահությունը հաստատում է Սայաթ-Նովայի օրինակով<sup>11</sup>,

\* \*

Սայաթ-Նովան հսկայական ազդեցություն է քողել կովկասյան ժողովուրդների մշակույթի վրա ընդհանրապես, աշուղական գրականության վրա՝ մասնավորապես: Ինչպես հայկական, այնպես էլ վրացական ու ադրբեջանական պոեզիան դժվար է պատկերացնել ոչ միայն առանց Սայաթ-Նովայի, այլև առանց նրա քարերաւ և ուղենշային ազդեցության. ամբողջ սերունդներ են դաստիարակվել նրա ժողովրդային: Դրանով էլ պետք է բացատրել այն հանգամանքը, որ չափածո ձևի մեջ Սայաթ-Նովային առաջինն անդրադարձան աշուղները: Ուշադրության արժանի հանգամանքներից մեկն էլ այն է, որ նրանք իրենց վարպետին չէին ընկալում սոսկ իրեն սիրու Լեզչի, այլ ներկայացնում էին իրեն ազգի ցավերով ապրող ու տառապող արվեստագետի:

Սայաթ-Նովի առածի պես  
Ազգի մշակ է Լեզիչը,  
Հազար ցավով մարտիրոսված  
Ճիշտ նահատակ է Լեզիչը...<sup>12</sup>

Հասարակականորեն այսպես էր արժեքավորում մեծ Լեզչի ստեղծագործությունը հանրա-հայտ Ջիվանին: Իրենց նախորդի նման՝ Ջիվանու աշակերտներն ու մեր օրերի աշուղները Սայաթ-Նովայի մեջ դարձյալ տեսնում են ոչ միայն «վստ սիրո դուլին», այլև «հայրենիքի վառ կարոտով» «ներսուի պես նահատակված» պոետին<sup>13</sup>, Սայաթ-Նովան գոսանների շգերագանց-ված վարպետն է, նրանց մոտան և ներշնչանքի անսպառ աղբյուրը: Նա է ներշնչել գոսան Աշուտին<sup>14</sup>, Չափարյանն էլ նրա շաղակալած վարդերից առած մի կաթիլ ջրով է Լեզիչ դարձել: Բնօրոշ է նաև այն, որ Սայաթ-Նովան աշուղներին ոչ միայն Լեզել է ներշնչել, այլև խալսի համար Լեզել:

\* \*

Սայաթ-Նովան ներշնչանքի անսպառ աղբյուր է Լեզի և է նաև հայ բանաստեղծների համար: Թումանյանն առաջիններից էր, որ լստ տրամադվույն զնահատեց հանճարեղ աշուղի ստեղծագործությունը ոչ միայն արտակարգ չեղմունքամբ գրված հոդվածներում, այլև բանաստեղծություն-ների մեջ:

Տաղով Լկավ,  
Ախով զնաց Սայաթ-Նովան,  
Ներգով Լկավ,  
Վերնով զնաց Սայաթ-Նովան,  
Սիրով Լկավ,  
Սրով զնաց Սայաթ-Նովան,  
Սիրով մնաց Սայաթ-Նովան<sup>15</sup>,

<sup>8</sup> Я. Полонский, Стихотворения, Ленинград, 1957, стр. 135.

<sup>9</sup> Վ. Բրյուսով, Բանաստեղծություններ, Երևան, 1957, էջ 258:

<sup>10</sup> «Ուկրաինական քնար», Երևան, 1954, էջ 308:

<sup>11</sup> «Русские писатели об Армении», Ереван, 1946, стр. 141.

<sup>12</sup> «Ջիվանու քնար», Երևան, 1959, էջ 390:

<sup>13</sup> Գոսան Աշուտի, Աղբյուր, Երևան, 1958, էջ 178:

<sup>14</sup> Գոսան Աշուտ, Աշուղական Լեզիչ, Երևան, 1946, էջ 14:

<sup>15</sup> Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1950, էջ 169:



Քիչ բառերով շատ բան ասելու՝ եզակիներին տրվող վարպետությամբ Թումանյանն այս յոթնյակում հասել է մեծ ընդհանրացման՝ բացահայտելով Սայաթ-Նովայի Երզնի համամարդկային էությունն ու նրանց հեղինակի անմահությունը, միաժամանակ տալով երգչի ապրած ժամանակաշրջանի դաժան պատկերը:

Հայ վերածնության շրջանի այս խոշորագույն դեմքը ոգեշնչել է նաև սոցիալիստական վերածննդի խոշորագույն շեփորող պոետի Երզնի դառնում ևն հուզաբարձ, սիրազեղ, ֆնարացիայի խոլական բափր շեփորող պոետի Երզնի դառնում ևն հուզաբարձ, սիրազեղ, ֆնարային, Երբ երգի նյութ է դառնում «սիրտը հազար մուրազ ու սև» Սայաթ-Նովան: Իր հանրահայտ տաղում Չարենցը Սայաթ-Նովային ընկալել է իբրև սիրո մեծուղի երգիչ:

Նայեց-նայեց Սայաթ-Նովեն, ամպի նման տխուր մնաց,  
Ասավ՝ Չարենց, էս գոգալից սրտիս մի հին մեմուռ մնաց.  
Սիրտս վառվեց, մոխիր դարձավ՝ ինձ կրակ ու հուր մնաց.—  
Դու էլ նրա գովիր արա, որ զա՛ օսկե մազը ձեռին<sup>16</sup>,

Չարենցը նաև Սայաթ-Նովայի մեծ ու ինքնատիպ տաղանդի զնահատողն է.

Հասա մինչև Ֆոանգստուն, Երգ ու տաղեր լսեցի—  
Սայաթ-Նովի ձիրքի նման Երկնային ձիրք շտեսա<sup>17</sup>,

Նա առաջինն էր, որ բանաստեղծական ձևի մեջ մեծարեց խալիսի շոռայ նոհարին.

Ձի ունեցել ընդ պես շոռայ՝ խալիսը՝ նոհար, Սայաթ-Նովա<sup>18</sup>,

Սայաթ-Նովայի մեծ և հերոսականությամբ ու դրամատիզմով հարուստ կյանքի ամեն մի դրվագ կարող էր դառնալ բանաստեղծության նյութ և հանախ էլ դարձել է: Այս առումով ուշադրավ է Շիրազի «Սայաթ-Նովան վանքի մրնում...» հոսք ներշնչանքով գրված բանաստեղծությունը. անգամ վանքի մոռյալ պատերի մեջ Սայաթ-Նովան «լույս գյոգալին», մեղիսների «գուսան Ջալին», «կյանքի լավին» է կարոտել.

Սայաթ-Նովան վանքի մրնում լույս գյոգալին էր կարոտել,  
Լույս գյոգալին, բերնի բալին ու սև խալին էր կարոտել,  
Ու մի գիշեր հանեց վեղարն, հազավ կապան իր գուսանի.  
Ու դուրս եկավ, փախավ վանքից, կյանքի լավին էր կարոտել<sup>19</sup>,

Ավելի բնորոշ, սակայն, բանաստեղծության վերջն է. վանքից փախած Սայաթ-Նովան ոչ գյոգալին է հանդիպում, ոչ գուսան Ջալին, ոչ էլ «կյանքի լավին» կարոտն է հազեցնում: Սա բանաստեղծական ընկալումն է այն բանի, որ երգիչը կյանքում իրականացած շտեսավ իր մեծ ու վսեմ երազանքները:

Խիստ անմիջականությամբ, մեծ Երզնի երգի, վերքի, հետագա սերունդների համար հաճախ երազանքի նյութ լինելու ընկալումով, իր ժողովրդին անմահություն բերած լինելու և իր ժողովրդի անմահությամբ անմահ լինելու հանգամանքի ընդհանրացումով է գրված Ս. Կապուտիկյանի «Սայաթ-Նովան»: Բանաստեղծուհին այն միտքն է ընդգծում, որ Սայաթ-Նովան «սիրելով ու սիրվելով» հասել է մեզ և մեզ հետ էլ պիտի ապրի «դար ու դարեր»:

Մեր Երզնիով, մեր վերքերով դար ու դարեր ֆայլենք պիտի,  
Ու դու մեզ հետ՝ քո ֆյամանչով գալու ևս դեռ, Սայաթ-Նովա<sup>20</sup>:

Տասնյակների են հասնում Սայաթ-Նովային նվիրված բանաստեղծությունները: Հաջողվածների շարքում են Հ. Սահյանի («Սայաթ-Նովա»), Ս. Վահունու («Սայաթ-Նովա»), Ա. Մարգարյանի («Հաղպատի համփա»), Ա. Արաքելու («Սայաթ-Նովա»), Ի. Նոնեշվիլու («Սայաթ-Նովա»),

<sup>16</sup> Ե. Չարենց, Երկերի ժողովածու, Մոսկվա, 1922, էջ 245:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 255:

<sup>18</sup> Ե. Չարենց, Հետիւր Երկեր, Երևան, 1954, էջ 186:

<sup>19</sup> Հովհ. Շիրազ, Քնար Հայաստանի, Երևան, 1958, էջ 29:

<sup>20</sup> Ս. Կապուտիկյան, Բարի երթ, Երևան, 1957, էջ 76:

Հովհ. Կարայանի («Արի, բլրով Սայաթ-Նովա»), սփյուռֆահայ բանաստեղծներ Մ. Արմանյանի («Սայաթ-Նովային»), Թ. Թորանյանի («Սայաթ-Նովա») և շատ ու շատ ուրիշների զործեր, որոնցում բազմազան ձևերով ու հնարամտորեն փառաբանվում են հանճարեղ երգչի անմահությունը, նրա ջերմաշունչ երգերի կախարհական բույրն ու բովանդակը, զծագրվում է աշուղի անհատականությունը՝ իր ապրած դարաշրջանի ֆոնի վրա, մեծարվում է սիրո երգիչն ու երգչի մեծ սերը, հաջողված պատկերներով ու ջերմ լիրիզմով կերտվում է աշուղ-բանաստեղծի լիրիկական կերպարը:

\* \* \*

Սայաթ-Նովայի նկատմամբ մյուս ժողովուրդների տածած սիրո ու հարգանքի արտահայտություններից է նաև ռուս բանաստեղծ Բ. Սերբրյակովի «Սայաթ-Նովա» բալլադը (հեղինակն իր գործը պոեմ է կոչել), որի հիմքում ընկած է զուսանի կենսագրության շուրջը հյուսված բազմաթիվ ավանդույթներից մեկը: Ինչպես և պետք էր սպասել, բանաստեղծը չի մնացել ավանդության սահմաններում ու նույնությամբ չի վերարտադրել այն, այլ, ելնելով կերպարի ամբողջականացման անհրաժեշտությունից, կատարել է որոշ իրացումներ ու փոփոխություններ: Ավանդաբար մեզ հասած մի փոքրիկ միջադեպով Սերբրյակովը կարողացել է արտակարգ լիրիզմով ու հուզականությամբ արտահայտել մեծ զուսանի երգերի հմայքը:

Սայաթ-Նովայի կենսագրության՝ խորհրդավորության մոտիվ ծածկված որոշ հանգամանքներ պարզաբանվել են միայն ժամանակի ընթացքում: Երբեմն այդ է պատճառը, որ սարբեր ստեղծագործողների մոտ հանդիպում ենք տարբեր մեկնաբանությունների: Սերբրյակովի Սայաթ-Նովան վաճել է մտնում, որովհետև մեռնում է նրա երազանքների ու երգերի առարկան՝ արհայախույր Աննան<sup>21</sup>, Գ. Սարյանը նկատելիորեն տուրբ է տալիս նուսահատությունից վաճել մտնելու վերաբերյալ բնադատության մեջ տարածված տեսակետին<sup>22</sup>, Թ. Հուրյանի մոտ սիրո ողբերգության մասին խոսք անգամ չկա: Նա ավելի շատ ընդգծում է սոցիալական մոմենտը, իշխանավորներից դառնացած, կյանքում հանդիպած քաղում չարիքներից ու դժբախտություններից հոգնած զուսանը վաճել է գնում՝ աստծո մեջ որոնելու նշմարտության հանգրվանը<sup>23</sup>:

Արդարությունը պահանջում է խոստովանել, որ հիշյալ հեղինակներն ամեն կերպ աշխատել են կովաններ գտնել Սայաթ-Նովայի վաճել մտնելը երբ ոչ լրիվ արդարացնելու, գոնե որոշ չափով հիմնավորելու համար: Կարևորն այն է, որ վաճական Սայաթ-Նովայի կերպարն ստեղծելիս նրանք աշխատել են չզնալ բնույթատվության ետևից և ամեն կերպ ձգտել են յուրովի մեկնաբանել այն:

Եթե Սերբրյակովը միայն նշում է, որ վաճելի մոտայ պատերն անգամ չեն կարողացել սպանել երգչի հանճարը, ապա Գ. Սարյանը ավելի մանրամասն է քափանցում երգիչ-վաճականի հոգու գաղտնաբանները: Մեծ ներշնչանով գրված «Սայաթ-Նովան» բալլադում նա ընտրել է սիրո անմահ երգչի կյանքի դրամատիզմով հագեցած այն շրջանը, երբ նա վտարվում է պալատից և բռնի կերպով վաճական կարգվում: Սարյանի Սայաթ-Նովան վաճել է գնում, բայց նրա հոգին չի համակերպվում վաճական կյանքի հետ: Նրա շուրթերը ոչ քան աստծուն ու նրա սրբերին ուղղված աղոթքներ, այլ... իր Աննայի անուն են շնչում: Նա միայն հագուստով է վաճական, իրականում նրա հոգին քախծում է իր Աննայից, աշխարհից ու մարդկանցից բաժանված լինելու համար: Նա իր սերը երկրային հանցանք չի համարում, բնահակառակ՝ զայրույթով բողոքում է, քե ինչու աշխարհին «ոռհմ» անող տիրամայրը աննառ և բողբ իրեն.

— Աշխարհին ոռհմ ես անում, ինձ ընչի բողբ աննառ,

Գուցե քե մեղքի տեր եմ, մեկն ասեր՝ իմանայի,

Գուցե քե քո բարկության իմ սերը եղավ պատճառ,

Որ երգում տեսիդ պես եմ գովել ես իմ Աննային...<sup>24</sup>,

Եվ Սայաթ-Նովայի խնդրածը ներում չէ այն բանի համար, որ տիրամոր տեսնով է գովերգել իր Աննային, ոչ էլ հոգու փրկություն է աղերսում: Այդ հոգին հանցանք չի գործել: Նա իր Աննայի համար տիրամորից, պարզապես, երջանկություն է սպասում.

<sup>21</sup> Բ. С е р е б р ы к о в, Саят-Нова, Баку, 1928.

<sup>22</sup> Գ. Ս ա р յ ա ն, Երկեր, Երևան, 1956, էջ 486—493.

<sup>23</sup> Թ. Հ ու Ր Յ ա ն, Բանաստեղծություններ, Երևան, 1956, էջ 140—175.

<sup>24</sup> Գ. Ս ա р յ ա ն, Երկեր, Երևան, 1956, էջ 492.

Մի խնդիր ունեւմ ընկնից, մեն մի բան կուզենայի.  
Գրառստ ըո հայացնով միշտ նրա գլխին կենաս.  
Որ բարի, բարի լինի պսակը իմ Աննայի...25:

Հոյակապ է այն պատկերը, երբ դժբախտ երգչի աչքերի սուաջ աստվածամոր նկարի տեղ հառնում է Աննայի պայծառ կերպարը: Դա իրական կյանքի հաղթանակն է կրոնականի հանդեպ, Աննայի հաղթանակը տիրամոր նկատմամբ: Ուշադրության արժանի է նաև բալլադի վերջը: Այդ ամենից հետո այն ավարտվում է ոչ մեղայական աղոթքներով, այլ իր երազները, աշխարհն ու մարդկանց կորցնելու պատհանով «բարձրաձայն, սրտամորմոխ» հեկեկոցով, որ դարձյալ կրոնականի մերժումն է:

Սայար-Նովայի գեղարվեստական կերպարի մարմնավորման նախապահին նոր նվաճում էր Թ. Հուրյանի «Սայար-Նովա» պոեմը. նրա հերոսը մեծացել է Վրաստանի գեղահրաշ բնության ծոցում. Քոի վշտոցն է օրորել նրան, նրա հոգում հնչել են «հորովկն ու տխուր ուրմուխին», ծաղկուն դաշտերի բույրն է շնչել նա, դրա համար էլ:

Բարակ գեփյուռի գաղտնիք կարդում,  
Թրքին է զգում սրտի սիրածի  
Վառ ծաղիկների ամեն մի քերքում...26

Պոեմի արժանիքներից մեկն այն է, որ Հուրյանը երգչին ներկայացրել է ժողովրդի հետ ունեցած անխզելի կապի մեջ: Հենց այստեղ դրսևորվում է պոեմի մի ուրիշ առավելությունը՝ մասսայական տեսարանների վարպետորեն կատարված նկարագրությունը (Քոի փփին ձկնորսների հետ Սայար-Նովայի լեֆի տեսարանը): Ձկնորսների անկաշկանդ, հարազատ միջավայրում հնչում է Սայար-Նովայի երգը՝ մեծ սիրով, ազնվության ու վեհության զգացմունքներով լցնելով «բախտից հալածված ու անօրհն» ձկնորսների, «գեղիբան, բովիչ» աղջիկների, «ինչպես եղևոր նկուն» հուրսների ու կանանց սիրտն ու հոգին: Սրանք են Սայար-Նովայի բնաբի իսկական ներշնչողները, սրանք են նաև նրա հոգեգմայլ երգերի իսկական գնահատողները: Խալիսի այս հարազատ ընդունելությունն է՛լ ավելի է ընդգծում պալատի խորքությունը, պալատ, որ շատ նեղ էր «հայրենիքի լայններին» սովոր երգչի համար:

Հուրյանը կարողացել է նշմարագիտորեն պատկերել ժամանակի կովկասյան կյանքի հասարակական-սոցիալական հարաբերությունները և Սայար-Նովայի կերպարը կերտել հիշյալ հարաբերությունների ֆոնի վրա: Անարդարությունն ու անհավասարությունը շատ են կյանքում. իսկ Սայար-Նովան չի կարող անտարբեր լինել դրանց նկատմամբ: Նրան զգվեցնում է պալատական բանասերկու միջավայրը, նա կրկին կարոտում է իր երգերի անկաշառ ունկնդիրներին, ու նրանց կարոտն իր սրտում՝ հեռանում պալատից: Պակասը լրացնում է «սիրած կնոջ» կորուստը, և նա փակվում է վաճառում:

Յուրօրինակ ձևով է լուծվում հերոսի հոգեկան դրաման: Կովկասյան ժողովուրդների համար դարավերջում ստեղծված ծանր ու անելանելի պայմանները, ըստ Հուրյանի, ինքնասպանության են հասցնում փրկության ելք չգտնող վաճառականին: Հեռանում է աշխարհից երգի արձան, բայց երգը մնում է, իրեն սերունդների ու դարերի սեփականություն: Հենց երգչի անմահության զովերգումով էլ ավարտվում է պոեմը.

Նրկնի անհամար հուրերը հանգան,  
Նրկիրը սրբեց աշիկներն իր բաց,  
Դնաց աշխարհից երգերի արձան,—  
Բայց երգը մնաց, ու սերը մնաց27:

Հուրյանի Սայար-Նովան մեր առջև ներկայանում է իրեն բնությունից օժտված, ժողովրդի ցավերով ապրող ու տառապող, արդարությունն ու նշմարտությունն որոնող մի անհատականություն, որ, սակայն, ոչ մի տեղ չգտնելով օրոնածը՝ իր մահով դատավճիռ է կարդում անօրեն, անարդար ու անաստված աշխարհին:

Վաղամեծիկ բանաստեղծի տաղանդի բնորոշ կողմերից մեկը մարդկային հոգու բարդ և բազմազան մտորումները բացահայտելու մեծ կարողությունն է, որն առավելագույն ուժով դրսևորվել է նաև այս պոեմում: Բացառիկ ուժով է զգված հատկապես ամեն ինչից հուսախաբ,

25 Նույն տեղում:

26 Թ. Հուրյան, Բանաստեղծություններ, Նրևան, 1956, էջ 149:

27 Նույն տեղում, էջ 175:



«դառնությունների... անհուն ծովի» մեջ տարուրերվող արեղայի կերպարը: Նու խորանի առաջ կանգնել է հուսահատ, մտորումներից կենդանաված նակատով, գլխարաց, «վիզառաֆող», հոգեկան ծանր հարվածների գունատությունը դեմքին և մեծումի դատավճիռ է կարգում ռեալ-գործություններով ծանրաբեռնված աշխարհին: Առանց չափազանցության՝ Հուրյանը կերտել է մի ֆանդակ, շարի ու բարու ալիքներում տարուրերվող արեղայի ֆանդակ՝ սովորական ֆանդակներից միայն նրանով տարբերվող, որ սա կարող է մտմտալ իր խոհերը, գրուցել բերքոցդի հետ:

Պոեմում Հուրյանն ստեղծել է մի շարք դեպքեր ու իրադարձություններ, որոնք, մնալով հնարավորի և իրականի սահմաններում, կերպարը բնութագրում են բազմակողմանիորեն: Մեր կարծիքով նա միայն մի տեղ է վրիպել: Խոսքը վերաբերում է Սայաթ-Նովայի ինֆանսպանություն փաստին: Հստակ թե կարելի է համաձայնել մեր բնագաղափարյան մեջ արտահայտված, աւրիշների էլ հավանությանն արժանացած այն կարծիքին, թե կերպարի նման մեկնարանումը (ինֆանսպանությունը)՝ «վիճելի է, բայց ոչ մեծելի»: Բանն այն է, որ թեև Սայաթ-Նովան շատ է տառապել կյանքում, շատ է մտածել շարի ու բարու մշտական պայքարի մասին, այն մասին, ինչպես նիշտ նկատել է բանաստեղծը, թե ինչու է «գլխատված արդարությունը», թեև հազար ձեռքից է կրել դառնություններ, բայց երբևէ չի հուսահատվել, չի կորցրել բարու վերջնական հաղթանակի հույսը: Երա համար էլ կենսահաստատ երգչին ինֆանսպանություն վերագրելը, որքան էլ բանաստեղծը ձգտել է հիմնավորել այն հասարակական միջավայրի դաժանությամբ, ժողովրդի ծանր վիճակի անկանխելիության գիտակցումով և աստծու նկատմամբ նրա հավատի կործանումով, հեռու է սլատմական Սայաթ-Նովայի բարոյական կերպարից:

Կերպարի պատմականությունից շեղում է նաև այն, որ Հուրյանը շափից ավելի մեծ տեղ է հատկացրել Սայաթ-Նովայի՝ հավատի ու աստծու մեջ մխիթարություն գտնելու ձգտումներին:

Աղա մահմադի գործերի կոտորածին Սայաթ-Նովայի զոհ գնալու վերսիան զեղարվեստական ավելի նիշտ լուծում է ստացել աղբյուրներից տաղանդավոր բանաստեղծ Մ. Ռահիմի «Սայաթ-Նովա» պոեմում: Այստեղ երգիչը ոչ միայն չի հուսահատվում, այլև, լսելով թշնամու ներխուժման մասին, «վերադառնում է ժողովրդի մոտ» և հայերեն, վրացերեն ու աղբյուրներեն երգերով ժողովրդին ոտքի հանում ոսոխի դեմ: Ժողովրդի երգչին հատուկ խիզախությամբ էլ նա զոհվում է այդ պայքարում. կատաղի զինվորները ներխուժում են վանք, որտեղ գտնվում է Սայաթ-Նովան: Խաչի փոխարեն փամանչան է նրա ձեռքին: Զինվորները մի պահ զմայլվում են հոգեզմայլ նվագից, բայց մի պահ միայն, հաջորդ վայրկյանին նրանք պահանջում են դադարեցնել նվագը: Բայց ո՞ւմ հրաման է կատարել կյանքում Սայաթ-Նովան... Գազազած զինվորները սպանում են ողևորությամբ երգող աշուղին: Ընկնում է ձեռքից փամանչան, վերջին անգամ հնչում են լարերը, և նրանց արձագանքն է, որ անցնելով հարյուրամյակների միջով, հասել է սերունդներին<sup>28</sup>,

Էսյն է Սայաթ-Նովայի աշխարհայացքը: Երգիչը հաղթահարել է իր դարի կրոնական մտածողությունը, հասնելով ավելի լուսավոր բմբուններին: Մարդն ու մարդկայինն է փնտրում նա յուրաքանչյուրի մեջ՝ անկախ նրա կրոնական պատկանելությունից, հասարակական դիրքից: Այս սովետոր առանձնահատուկ ձևով բնորոշված է պոեմում: Ջերմորեն սիրելով իր ժողովուրդը, Սայաթ-Նովան համանման զգացումով է լցված նաև դեպի մյուս ժողովուրդները: Երբ նոխուբյամբ նկարագրված արևելյան շուկայում նա արգելում է հայ իշխանին՝ ձեռնելու իր պարտապան մուսուլմանին՝ բնորոշելով, որ նա մարդ է, իսկ մարդու արժանապատվությունը չի կարելի ոտնահարել, կատաղած իշխանը փորձում է նրան մեղադրել հավատն ուրանալու մեջ: Երգիչը, սակայն, համարձակությամբ պատասխանում է, որ ինքն միշտ որոնել է նշմարություն և այդ որոնման նախապահին երբևէ չի խոնարհվել ոչ խաչի, ոչ էլ դուրանի առաջ<sup>29</sup>, Սա արդեն իսկական Սայաթ-Նովան է, աշխարհի բազում շարիների մեջ արդարություն, ազնվություն ու նշմարություն որոնող Սայաթ-Նովան:

Սայաթ-Նովայի կերպարը ողջնչել է նաև սփյուռքահայ արդի բանաստեղծներին: Նրանք Սայաթ-Նովային առաջին հերթին բնկալում են իրեն իրենց հոգիներին սնունդ ափող մեծ արվեստագետի:

Արարական անապատին մեջ հրակեղ ևս մեկ նամիտող,

Երգերդ քու գուլալ գետեր նամփուս վրա, Սայաթ-Նովա<sup>30</sup>,

<sup>28</sup> М. Рагим, Стихи и поэмы, Баку, 1959, стр. 214—216.

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 203—204.

<sup>30</sup> Բ. Բոբանյան, Աստղերու ճամբան, Պելլուրթ, 1960, էջ 55.

Մեծ բանաստեղծը անբաժան է նաև իր ժողովրդի տարագիր գավակների խոհերից ու մտորումներից, խոյանքներից ու երազանքներից.

Առանց սաղաֆ Բեմանչայիդ, Բեզ երազել մենք չենք կրնար,  
Առանց ձայնիդ անեզրական՝ մեզ երազել մենք չենք կրնար<sup>31</sup>,

Գրում է նույն հեղինակը՝ սփյուռքահայ տաղանդավոր բանաստեղծ Թորոս Թորանյանը: Ավելին, երկրագնդի լայնություններում ու երկարություններում ղեկերող հայերի համար Սայաթ-Նովան հայբենիքի կարոտի հագեցումն է, նրանց հոգիները «երգի խաղով» ջերմացնողը: Գրանով իսկ նա դառնում է հայի՝ հայության համար մղվող ամենօրյա պայքարի մասնակից: Այս խորը ընդհանրացումն է արված ֆրանսահայ բանաստեղծուհի Մառի Աբմանյանի «Սայաթ-Նովային» բանաստեղծության հետևյալ տողերում:

Մեր պանդուխտի տրտում հոգին երգիդ խաղով նանանչացավ,  
Մեր գաղթաբնիստ ձեռքիդ սագով կանանչացավ<sup>32</sup>,

Սայաթ-Նովան մոտ ու հարազատ է աշխարհի բոլոր ժողովուրդներին.

Գուն մերն էին ու մեր լեզվով կը խոսեիր սիրամորմոտ,  
Երբ Բեզ լսեց՝ Գալիացին իսկ ձեռքի սրտին դրած՝ լացավ<sup>33</sup>,

Այստեղ մի անգամ ես իր արդարացումն է գտնում հանճարեղ Թումանյանի այն միտքը, թե Սայաթ-Նովային, «մի լսողը երկրորդ անգամ լսելիս ավելի պիտի սիրի, և մին հասկանալուց ու սիրելուց հետո երբեք չպիտի մոռանա»<sup>34</sup>, Այդ է պատճառը, որ Սայաթ-Նովան դարձել է բոլոր ժողովուրդների, ամբողջ աշխարհի սեփականությունը.

Աշխարհով մեկ կանցնիս արդեն, ուրիշ գրով, ուրիշ ջրով,  
Կարծես աշխարհ չեն թիփիսի մեկ փողոցն է, Սայաթ-Նովա<sup>35</sup>,

Սփյուռքահայ բանաստեղծներից Սայաթ-Նովային նվիրված բանաստեղծություններ են գրել նաև Հ. Գյուլումյանը («Սայաթ-Նովա», «Սայաթ-Նովայական», «Սայաթ-Նովայական երազ»), Ա. Գառոնեն («Սայաթ-Նովա»), Վ. Հանյանը («Թամամ աշխարհ երգեցիր») և ուրիշներ:

\* \* \*

Դարից ավելի ժամանակամիջոցի ընթացքում «մեր վիթխարի, մեր հոյակապ» Սայաթ-Նովան ոգևորել ու ոգևորում է բանաստեղծներին ու արվեստագետներին: Կարելի է հուշայ, որ նրա ծննդյան 250-ամյակի տոնակատարությունը կոզեչնչի նրանց՝ ստեղծելու երգի արժանի պարավոր անմահությանն արժանի նորանոր գործեր:

31 Նույն տեղում, էջ 56:

32 Մ. Ա. Թ. մ. ա. ճ. յ. ա. ն., Գաղթաշխարհի երգեր, Փարիզ, 1962, էջ 22:

33 Նույն տեղում, էջ 22:

34 Հ. ո. վ. հ. Թ. ո. մ. ա. ն. յ. ա. ն., Երկերի ժողովածու, հատոր 4, Երևան, 1951, էջ 256—257:

35 Թ. Թ. ո. ա. ն. յ. ա. ն., Աստղերու համբան, էջ 56: